ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1960 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Զ. Մ. Դաւաբյան

ԹԵՅՇԵԲԱԻՆԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ) ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԻ ՀԻԵՐՈԳԼԻՖԻ ՄԱՍԻՆ

Հին Արևելքում Ուրարտուն այն պետություններից է եղել, որ ունեցել է իր սեփական գրերը։ Դրանք սեպագիր արձանագրություններ են, որոնց ամենավաղ նմուշները վերաբերում են մ. թ. ա. IX դարին և այժմ 400-ից ավելի են։

Հնագիտական պեղումները միաժամանակ ցույց են տալիս, որ Ուրարտուում սեպագրերից առաջ, և հետագայում նրանց զուգահեռ գոյություն են ունեցել հիերոգլիֆներ կամ պիկտոգրամներ, որոնք ուրարտական արձանագրիչները օգտագործել են զանազան առիթներով։

Ինչպես հայտնի է, ուրարտական կուլտուրան, հատկապես գրերի բնագավառում, կրել է Հին Արևելքի մի շարք երկրների և, առաջին հերթին, Ասորեստանի ազդեցությունը։ Հանրահայտ փաստ է, որ ուրարտական սեպագրերը փոխ են առնված Ասորեստանից, իսկ վերջինս այն, իր հերթին, փոխ է առել Շումերից։

Ուրարտական հիերոգլիֆների մասին կան մի քանի տեսակետներ։ Այսպես, Բ. Բ. Պիոտրովսկին ենթադրում է, որ ուրարտական և խեթական հիերոգլիֆների միջև շատ ընդհանուր գծեր կան[1]*։ Լեման Հաուպտը կարծում է, որ ուրարտական հիերոգլիֆները առընչվում են կրետե-միկենյան պիկտոգրաֆ գրերի հետ։*

Այս փոքրիկ հոդվածում մենք փորձ ենք անում վերծանելու Կարմիր-բլուրի պեղումներից հայտնաբերված բազմաթիվ հիերոգլիֆներից մեկը։ Նախնական դիտումներից պարզվեց, որ այդ հիերոգլիֆը գարեջրի նշանգիր է։

Մինչև այժմ մեզ հայտնի բոլոր ուրարտական արձանագրություններում ոչ մի տեղ հիշատակություն չկա գարեջրի մասին։ Այդ պատճառով էլ մեզ հայտնի չէ այդ խմիչքի ոչ գաղափարագիրը և ոչ էլ սեպագրերը, հետևաբար մեզ հայտնի չէ նաև, թե ինչպես են անվանել այդ խմիչքը։ Գարեջրի անվանումը հայտնի է շումերական գրավոր արձանագրություններից, որտեղից փոխ են առել նաև ասորեստանցիները։ Շումերական կավե այն տախտակները, որոնք իրենց բովանդակությամբ ներկայացնում են տնտեսական հաշվարկներ, հատկապես տաճարային տնտեսական հաշվարկները, հաճախ հաղորդում են գարեջրի մասին[3]*։ Ուսումնասիրողները վերծանել են այդ խմիչքի թե հիերոգլիֆը,*

---

[1] Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван. 1944. стр. 285.

[2] Նույն տեղում։

[3] Ch. Singer. E. Holmyard and R. Hall. A History of Technology Oxford. 1955. էջ 275։

թե՛ սեպագրերը[4]։ Շումերական արձանագրություններում գարեջրի հիերոգլիֆը եղել է հոլաձև անոթը[5] (տես նկար №1)։ Սեպագրերով գաղափարագիրը հետագայում արտահայտել են 𒄀 Bi կապակցությամբ, որը հոլաձև անոթի նկարելու կամ գրելու զարգացումն է (տես նկար № 1-ի № 6-ը)։ Շումերները, ինչպես և ասորեստանցիները բոլոր տեսակի գարեջրերը անվանել են škarum կամ Gaš եգիպտացիները այն անվանել են gag կամ Zed։



Նկ. 1. Գարեջրի նշանագրի զարգացումը հիերոգլիֆից դեպի սեպագրերը ըստ Ի. Մ. Դիակոնովի
1. Ջեմդեթ Նասր 3200—2900 թթ. մ. թ. ա.
2. Մինչև 2500 թ. մ, թ. ա.
3. 4 և 5 2000 թ. մ. թ, ա.
6. II հազարամյակի կեսից մ. թ. ա.

Այժմ Կարմիր-բլուրի պեղումների շնորհիվ մեզ հայտնի է գարձել գարեջրի ուրարտական հիերոգլիֆը կամ պիկտոգրամը։

1950 թ. պեղումների ժամանակ №28 գինու մառանի հարավ-արևմտյան անկյունում, հյուսիսային մուտքի մոտ, գինու կարասներից մեկի կողքին հատակի վրա ջարդված վիճակում հայտնաբերվել է գլանաձև մի անոթ։ Առաջին իսկ հայացքից պարզ էր, որ դա գարեջրի անոթ է։ Այդպիսի անոթներ Կարմիր-բլուրում հայտնաբերվել են 50-ից ավելի։ Դրանք կարմիր կավից դուրգի վրա պատրաստված գլանաձև, 15—18 լիտր տարողություն ունեցող անոթներ են, որոնք ծառայել են ինչպես գարեջրի քաղցուն քամելու, այնպես էլ գարեջուր պահելու համար։ Համար 28 մառանից հայտնաբերված գարեջրի այդ անոթի վրա դրոշմված են հիերոգլիֆ կամ պիկտոգրաֆ նշանագրերը, որոնք կատարել են սրածայր

[4] И. М. Дьяконов, К, возникновению письма в Двуречье (две архаические таблетки Гос. Эрмитажа). Труды отдела истории культуры и искусства Востока, Л. 1940, III, стр. 45.

[5] Ch. Singer, E. Holmyard and R. Hall. Նշվ. աշխ., էջ 280։

[6] Л. А. Липин. Аккадский (вавилоно-ассирийский язык) выпуск II, словарь, Л. 1957, стр. 197.

գործիքով, անոթը թրծելուց հետո։ Նկարված հիերոգլիֆը նույն հոլաձև անոթն է, որ շումերները գործածել են որպես գարեջրի հիերոգլիֆ (տես նկ. №2)։ Բացի հոլաձև անոթի նշանագրից, նրա կողքին փորագրված են նաև 7 անկանոն շրջանակներ։ Հնարավոր է, որ այդ շրջանակները արտահայտել են անոթի տարողությունը կամ մեջը լցված գարեջրի չափը։ Պարզ է, որ այդ անոթի մեջ Կարմիր-բլուրի բնակիչները պահել են գարեջուր և, որովհետև այն դրված է եղել գինու մառանում, ապա գինու հետ չշփոթելու համար անոթի վրա դրոշմել են գարեջրի հիերոգլիֆը։

№ 28 գինու մառանում գարեջրի անոթի հայտնաբերումը պատահական չէ. եթե նկատի ունենանք, որ այն անմիջական կապ ունի միջնաբերդի կենտրոնում գտնվող անցումային աստիճանավոր սենյակի հետ, որտեղից մարդիկ վերևի հարկից իջել են դեպի գինու մառանները և ներքնահարկը ընդհանրապես։ Քանի որ միջնաբերդի ներքնահարկում գտնվող գարեջրի արհեստանոցը և պահեստը բավականին հեռու են անցումային աստիճանավոր սենյակներից, ապա վերևի հարկից այնտեղ մուտք գործելը բավականին երկար ու դժվար էր լինում։ Այդ պատճառով էլ շատ հնարավոր է, որ № 28 զով ու փոխադրման համար հարմար մառանում մշտապես պահել են մեկ կամ երկու գարեջրի անոթ անհրաժեշտության դեպքում անմիջապես երկրորդ հարկը տանելու համար։



Նկ. 2. Գարեջրի հիերոգլիֆը հայտնաբերված Թելլեբարինի (Կարմիր-բլուր) գարեջրի անոթի վրա

Չնայած հիերոգլիֆ նշանագրերը վաղուց չէին բավարարում մ. թ. ա. VII դարում իր տնտեսական և քաղաքական նոր վերելքը ապրող ուրարտական պետության պահանջները ու հիերոգլիֆ դրերին վաղուց փոխարինել էին սեպագրերը, այնուամենայնիվ տնտեսական հաշվարկներում, ինչպես վերևում նշեցինք, մի շարք հիերոգլիֆներ կամ պիկտոգրաֆ նշանագրեր շարունակել են պահպանել իրենց գոյությունը սեպագրերին զուգահեռ։ Կարմիր-բլուրի մի շարք կարասների, անոթների և բրոնզյա թասերի վրա, հատկապես գինու և այլ հեղուկների տարողությունն արտահայտելու համար, արձանագրել են հիերոգլիֆ կամ պիկտոգրաֆ նշանագրեր, այնինչ անցյալում, այսինքն IX դարում գրել են սեպագրերով[1]։

Ասորեստանցիները երկրորդ հազարամյակի կեսերից գարեջուրը նշում էին սեպագրերով, սակայն դրանց զուգահեռ որոշ փոփոխություններով շարունա-

[1] 1959 թվականին Էրեբունիի (Արին բերդ) պեղումների ժամանակ միջնաբերդի հարավ արևելյան մասում հայտնաբերվել է գինու մառան, որը վերաբերում է մ. թ. ա. IX դարին։

Այդ մառանում գինու կարասների վրա տարողությունը արձանագրել են բացառապես սեպագրերով՝ ակարկի և տերուսի, այն էլ ոչ այնպես՝ ինչպես Կարմիր-բլուրի մի շարք կարասների վրա՝ միայն սկզբնական սեպագրերով, այլ ամբողջական։ Իսկ VII դարում մ. թ. ա. Կարմիր-բլուրի գինու կարասների 80 տոկոսի վրա տարողությունը արձանագրել են պիկտոգրաֆ նշանագրերով։ Նույն VII դարին են պատկանում նաև թասերի և այլ անոթների վրա դրոշմված հիերոգլիֆ կամ պիկտոգրաֆ նշանագրերը։

կել են գործածել նաև հիերոգլիֆները։ Գարեջրի հիերոգլիֆի փոփոխությունը կայանում էր նրանում, որ հոլաձև անոթի սրածայր հատակը կտրված ձևով են գրել[8] (տես նկ. №3). Հետևաբար, ամենայն հավանականությամբ ուրարտացիները այն, ինչպես և սեպագրերը, նույնպես վերցրել են Ասորեստանից, իսկ վերջինները՝ Շումերից։



Նկ. 3.

1. Գարեջրի շումերական պիտոգրաֆ նշանագիրը մ. թ. ա. III հազարամյակի կեսերից մինչև մ. թ. ա. II հազարամյակի սկիզբը

2. Գարեջրի ակադական պիկտոգրաֆ նշանագիրը մ. թ. ա. II հազարամյակից

Կարմիր-բլուրի պեղումները ցույց են տալիս, որ ուրարտացիներին հայտնի է եղել նաև հիերոգլիֆի սկզբնական ձևը, որն ընդօրինակել են և գրել գարեջրի անոթի վրա ավելի պարզեցրած ձևով։

Վանի, Ռոփրակ-կալեյի, Էրեբունիի և Կարմիր-բլուրի պեղումներից հայտնաբերվել են բազմաթիվ առարկաներ և անոթներ, որոնց վրա եղել են հիերոգլիֆ և պիկտոգրաֆ նշանագրեր։ Նրանց ուսումնասիրումը չափազանց կարևոր է, քանի որ այն հնարավորություն կտա պարզելու նրանց ծագումն ու նշանակությունը։

---

[8] Ch. Singer, E. Holmyard and R. Hall, Նշվ. աշխ., էջ 280։